ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

# ՈՐՈՇՈՒՄ

2020 թվականի դեկտեմբերի 23-ի N 211-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2020-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 9-րդ կետի, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ ՀՀ հաշվեքննիչ պալատը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2020-2023 թվականների ռազմավարական զարգացման ծրագրի իրականացման միջոցառումների պլանի 1.1.2, 1.2.3, 2.1.2 և 2.5.1 միջոցառումները շարադրել նոր խմբագրությամբ.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1.1.2 | ՀՊ օրենքում փոփոխություն-ների նախագծի մշակում | ՀՊ նախագահ, պատասխանատու ՀՊ անդամ, ՄՎՄԿ վարչության պետ, Իրավաբանական բաժնի պետ | IV եռամսյակ 2021թ. | ՀՊ բյուջե, արտաքին աջակցություն | • ՀՊ մասին օրենքի փոփոխությունների նախագիծը ներկայացված է ԱԺ-ին;<br>• Փոփոխությունները բացատրված են պատգամավորներին |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1.2.3 | Հաշվեքննողների դեմ բողոքների ուսումնասիրման ընթացակարգի մշակում և իրականացում | ՀՊ նախագահ, պատասխանատու ՀՊ անդամ, ՄՎՄԿ վարչության պետ, Իրավաբանական բաժնի պետ | I եռամսյակ 2021թ.<br><br>I եռամսյակ 2022թ. | ՀՊ բյուջե, արտաքին աջակցություն | • 2021թ. ՀՊ կողմից հաստատված ընթացակարգ<br>• 2022թ. համար իրականացված ընթացակարգ<br>• Ընթացակարգի գործունեության բավարար գնահատում 1-ին եռամսյակ 2023թ. |
| 2.1.2 | Տարեկան գործունեության ծրագրերի նախագծման ընթացակարգի մշակում և իրականացում | Պատասխանատու ՀՊ անդամ, ՄՎՄԿ վարչության պետ | IV եռամսյակ 2021թ.<br><br>I եռամսյակ 2023թ. | ՀՊ բյուջե, արտաքին աջակցություն | • 2021թ. ՀՊ կողմից հաստատված ընթացակարգ<br>• 2022 տարվա համար իրականացված ընթացակարգ<br>• Ընթացակարգի գործունեության բավարար գնահատում 2023թ. 1-ին եռամսյակ |
| 2.5.1 | Հաշվեքննիչ պալատի առաջարկությունների իրականացման մշտադիտարկման համար կարգի մշակում | Պատասխանատու ՀՊ անդամ, ՄՎՄԿ վարչության պետ | IV եռամսյակ 2021թ. | ՀՊ բյուջե, արտաքին աջակցություն | Ընդունվել է ՀՊ առաջարկությունների իրականացման մշտադիտարկման կարգ: |

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ — [signature] — Լ. ՅՈԼՅԱՆ